

Կնեզակ

**ՍՍՀՄ-ԿԹՍԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ
ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՍՏՈՍԵՍ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ
ՄԵԾԻ ՏՈՆՆ ԿԻՆԿԻՈՅ ԵՒ ԱԹՈՒԱԿԻՅ ՄԵՐ Տ. ԲԱԲԳԷՆ Ս. ԿԱԹՈ-
ՂԻԿՈՍ.** Մերազան Առաջնորդաց Թեմականաց Բերիոյ, Պերուքի, Դամաս-
կոսի, Անտիոքի եւ Կիպրոսի, եւ Արժանաւորին Քահանայից եւ ամենայն
Ժողովրդոց Եկեղեցւոյ մերոյ որք ընդ Հոգեւոր Իշխանութեամբ Աթոռոյս
Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ եւ ամենայն ժողովրդոց Առաջ-
նորդարանաց եւ զանազան Հայրենակցական Միութեանց եւ Մարմնոց,
Ողջոյն եւ Օրհնութիւն:

Մեր բազմեալս Թարգմանիչներուն զուլս եւ պէս եւ Հայաստանայց Եկե-
ղեցւոյ մեծ Հայրապէս՝ Սուրբ Սահակ Պարբեւի Տօնին փառաւորումներէն մեզի ալ
բաժին կը հանե՛ք ի պատիւ Ասուածաւունչի պանծալի Թարգմանչին հետ մեր ունեցած
անուանակցութեան:

Օրհնեա՛լ ըլլայ Ասուծոյ կամքը որ պահեց մեզ, սարիներու ծանրութեան սակ
բեկեալս, մեր սիրելի Ժողովրդեան բեկորներուն հետ, որոնք բանկազին են մեզ համար:

Կաթողիկոսութեանս 33րդ սարին թեւակոխած ենք, եւ մենք սարիներու այս
երկար շրջանին մէջ չզաղբեցանք խորհելէ մեր Ժողովուրդի բարւոյն համար եւ ըրինք
կարելին խօսով եւ գործով, եւ այս վերջին չորս սարիներու ընթացքին մէջ ալ մեր
Վեհաւեօրն Աթոռակցին անխնշ գործակցութեամբ:

Գիտենք այն բոլոր բարոյական եւ ճշմարտական դժուարութիւնները, որոնց են-
թարկուեցան մեր Ժողովրդին սիրելի զաւակները, մա՛նաւանդ անոնք որ տեւական
գործ եւ կանոնաւոր զբաղում չունին իրենց սան ապրուստը ապահովելու համար, եւ
անոնք՝ որ անհաստատ *պարաքներու* մէջ կը բնակին, նշաւակ ձմռան ցուրտին եւ ա-
մառուան տաքին անբարեխառնութեանց:

Եւ մեր սիրտը սաստիկ կը ցաւի, երբ տեսնենք թէ այսպիսի դժնդակ պայման-
ներու մէջ ապրող մեր ազգին զաւակները աւելի եւս կը դառնացնեն իրենց կեանքը,
ամուսնական դժբախտ խնդիրներով:

Իրաւունք չունինք մեղադրել դժբախտութիւնները, որոնք մեր կամքէն անկախ
պատճառներով կու գան: Մեր ընտանեկան Մրբութիւններուն մոռացումը եւ նուիրա-
կան աւանդութիւններուն խանգարումը, որոնք մեր դժբախտութիւններն են, հետե-
ւանքն է ծանօթ տեղահանութեան եւ տարագրութեան:

Բայց մեր պարտքն է միշտ յիշեցնել մեր Եկեղեցւոյ սիրելի զաւակներուն թէ
պէտք է վերադառնալ մեր ազգային ողջմտութեան, մեր ընտանեկան հայացի կանոննե-
րուն եւ ընկերային աւանդութիւններուն ամուսնութեանց առթիւ:

Ահաւոր է վիճակացոյցը այն ամուսնալուծումներու, որոնք տեղի ունեցած
են 1915-էն ի վեր մեր թեմերուն մէջ, իբրեւ արդիւնք հապնեալ, անզգոյշ եւ խառն
ամուսնութեանց:

Ամուսնութիւնը հանոյք եւ խաղալիկ եղած է ոմանց համար, ասոնք դրամի
համար կարգուած են, անոնք հանոյքի համար, ուրիշներ շահ մը կամ նկատում մը ա-
պահովելու համար ամուսնութեան մէջ, եւ այսպիսիներ, իրենց ամուսնութենէն ժա-
մանակ մը յետոյ կ'սկսին զիրար ասել եւ դիմել Առաջնորդարաններ որպէս զի պաշ-
տօնապէս լուծուի իրենց ամուսնական կապը: Մեր Առաջնորդարանները շատ զբաղե-
ցընող բանը ամուսնալուծումներու վերաբերեալ խնդիրներ են, եւ ասիկա ցոյց կու
տայ թէ ո՛րչափ թեթեւութեամբ կ'աւարտուած են ամուսնութիւններ:



Մենք մեր Կարող իկոսութեան երեսունե աւելի տարիներուն մէջ մասնակից ելանք մեր Ժողովրդի ցաւերուն եւ ուրախութեան, երբ ունեցաւ ուրախութիւն, բայց ամուսնական կեանքին ապականութիւններուն մեզի պատճառաւ ցաւը շատ խորունկ եղած է:

Անա ա՛յս է պատճառը որ երբ մեր պնուան տնայնութեան առթիւ ամեն կողմէն շնորհաւորանք կ'ուղլուի մեզի եւ Կիլիկիոյ Կարող իկոսական Աթոռին հանդէպ կ'արտայայտուին որդիական սիրոյ հաւատարմութիւն եւ հաւատարմութիւն, պարտք կը զգանք մեր շնորհակալ իբր յայտնել ամենուն, եւ նոյն ատեն իբրեւ տրիստր մեր կողմէն յիշեցնել Ձեզի ամուսնութեան նուիրական կանոններն ու պայմանները, որպէս զի վերջ տրուի ամուսնական կեանքի վերաբերեալ ցաւալի եւ յաւատարմութիւն խնդիրներուն, որոնք կը յանգին ամուսնութեան նուիրական կապին, այսինքն երդումով. խոստումով եւ աստուածային օրհնութեամբ կնքուած երկու հոգիներու միութեան քակտումին:

Ուրեմն, Սիրելի Ձաւակներս, ուշադրութեամբ եւ սիրով մտիկ րե՛ք հետեւեալ կէտերը:

Ա.— Այսուհետեւ կ'զգուշացնենք զձեզ խառն ամուսնութեան: Հայ եկեղեցւոյ զաւակները պէ՛տ է որ իրենց ծանօթ եւ իրենց ազգային եւ եկեղեցական աւանդութիւններուն համեմատ սնած եւ մեծցած սղօղիկներու եւ մանչերու հետ ամուսնանան:

Բ.— Վսանգաւոր է առանց պատշտական նշանախօսութեան երիտասարդաց իրարու հետ խօսակապ ընելը: Այս սովորութիւնը յաճախ ամօթալի վերջաւորութիւն կ'ունենայ, բազմապիսի պատճառներով, որոնք գաղտնիք մը չեն:

Ազատ սիրոյ հակումները, այս վաս եւ շատ վսանգաւոր սովորութիւնը պէ՛տ է որ դադրի: Երեւ ամիս բաւական է նշանաւորի եւ պսակի պատրաստելու համար՝ ըստ կանոնաց Հայաստանաց եկեղեցւոյ:

Գ.— Պէ՛տ է հնազանդիլ մեր նախնեաց քեւել վաղեմի, բայց շատ բանաւոր կանոններուն եւ ողջմիտ աւանդութիւններուն եւ զգուշանալ ամուսնութիւն կնքելէ ազգականութեան կամ արեւնակցութեան մերձաւոր ասիւնաններուն մէջ, որ *մահօք* են:

Մենք, իբրեւ Հայրապետ, նկատի առնելով շատ ծանրակշիռ պարագաներ եւ փափուկ խնդիրներ, երբեմն արտօնած ենք մերձաւոր ազգականներու ամուսնութիւնը. բայց ասիկա մեր Հոգեւոր Իշխանութեան ուժով եւ հայրական զօրութեամբ, բացառիկ կարգադրութիւններ են եղած, եւ ո՛չ քե կանոնական հրաման: Հետեւաբար այսպիսի բացառիկ կարգադրութիւններ չեն կրնար առակ օրինակ ըլլալ ուրիշներուն՝ մերձաւոր ազգականներու մէջ ամուսնութիւն կնքելու համար: Պէ՛տ չէ որ այս բացառիկ կարգադրութիւններուն նայելով ըսուի. — Ինչո՞ւ այսինչները արտօնուեցան եւ մենք չենք արտօնուիր: Մենք ալ չենք. երբ Դուք չեք արտօներ, ուրիշ եկեղեցիներու կ'երթանք: Այսպէս ըսողներ պէ՛տ է գիտնան որ ո՛չ մէկ տեղ բացառութիւնները կրնան կանոնի եւ օրէնքի վերածուիլ: Եւ յետոյ՝ Մայրենի եկեղեցւոյն սերը եւ նուիրականութիւնը կիրք եւ հանդիման գոհացնելու պատրուակ մը կը դառնայ այդպէս ըսողներու լեզուին վրայ: Այդպիսիներ, իրենց անգոյն նկարագրով, ո՛չ մէկ արժեք չեն աւելցնէր քե՛ Մայրենի եկեղեցւոյն եւ քե՛ յաւանուն եկեղեցիներու վրայ: Անոր համար *կ'զգուշացնենք* մեր սիրելի զաւակները որ հաւատարմիւ եւ հնազանդ ըլլան իրենց Մայրենի եկեղեցւոյն, եւ ամեն հաշիւն ու կիրք վեր դառնն ազգային արժանապատւութիւնը:

Դ.— Կ'զգուշացնենք տարածաւ պսակներէ: Ամուսնական պսակի օրհնութեան համար լայն ժամանակ տրուած է: Պէ՛տ է որ այս սովորութիւնն ալ յարգուի մեր սիրելի Ժողովրդի կողմէն: Առանց նկատի առնելու արգիլեալ օրերու կանոնը, առանց խորհրդակցելու տաներէց Քահանաներու հետ, հարսնիքի պատրաստութիւններ տեսնել եւ Առաջնորդարաններու դուռը ամբողջ առնել, արգիլեալ օրերու մէջ պսակ օրհնել տալու:

համար, հակառակ է կենցաղագիտութեան ամենեւնի պարզ օրէնքներուն եւ եկեղեցական կանոններուն:

Ե.— Հայ-բիւսոնեայ երիտասարդներու համար կանոնական եւ աւանդական սովորութիւն էր պատրաստել իրենց ամուսնական պսակին, մարմնի մաքրութեամբ եւ արտի եւ հոգւոյ սքրութեամբ, եւ ասոր համար պսակին առաջ խոստովանանք կ'ըլլային եւ Ս. Հալութիւնը կ'առնէին, եւ այնուհետեւ օրհնել կուտային իրենց պսակները:

Կը պատուիրենք որ Քահանայ Հայրեր յիշեցնեն իրենց խոստովանողիներուն այս առաքինութիւնները եւ հոգ տանին անոնց գործադրութեան:

Զ.— Կը պատուիրենք որ հարսնիքները պարզ ըլլան եւ վայելուչ: Առանց արբեցութեան, առանց օտարոտի նուագներու եւ երգերու, առանց գիշերները լուսընելու, ազգային եւ անհասական արժանապատւութեան բարձր քննարկով, վայելչութեամբ, զուարթութեամբ, բայց ո՛չ երբեք թեթեւութեամբ եւ շուայութեամբ:

Վաղանցիկ վայելքներու համար դրամ վասնել չի հաշուիր խոհականութեան հետ: Երբ դրամ ունիք, ձեր հարսնիքներուն առիթով տուէ՛ք ձեր եկեղեցւոյն, ձեր դպրոցներուն, ձեր աղփաս եւ կարօտ ազգականներուն: Մեծագոյն բարեգործութիւնն է այս որ մարդիկ կրնան ընել իրենց կեանքին ամենեւնի աղուոր մէկ հանգրուանին վրայ:

Ահա՛ ասոնք են, Սիրելի Ժողովուրդ, մեր պատուիրները ձեզի:

Աստուծոյ ինծի շնորհուած 85 տարիներուն 33-ը Կիլիկիոյ Կարող իկոսական Աթոռին վրայ նուիրած եմ ձեզի ծառայելու եւ օգտակար ըլլալու համար: Գիտեմ ձեր պէտքերը, կ'զգամ իմ պատրաստութիւնս ծանրութիւնը, եւ իբրեւ ձեր հայր եւ Հայրապետ ուղեցի պատրաստ մէկ բաժինը կատարել այս ԿՈՆՏԱՆՍՏԻՆՈՒԼԻՍ, յիշեցնելով ձեզի ամուսնութեան վերաբերեալ այդ վեց կէտերը, ուղղակի ձեր բարիքին եւ ձեր երջանկութեան համար:

Մտիկ րե՛ք ձեր ծերունի Հօր խրատները: Բարձր պահեցէ՛ք ձեր անձնական արժանիքը եւ ազգին պատիւը ամենուն առջեւ:

Ձեր հաւատարմութեամբ Մայրենի եկեղեցւոյ կանոններուն եւ այս երկրի Կառավարութեան, պատիւ բերէ՛ք Հայ անուան:

Սիրեցե՛ք ձեր Մայրենի եկեղեցին: Սիրեցե՛ք զիրար իբրեւ Հայ-Բիւսոնեայ եւ լրբայրներ, սուրբ սիրով եւ խորունկ անձնութեամբ:

Տերը օրհնէ ձեզ եւ ձեր ամուսնութիւնները, որպէս զի Տիպար հայ տուներ վերստեղծուին փոխանակ մեր կորուստներուն, եւ լիովին վայելիք դուք աստուածային օրհնութեան պատուները:


Մեր Սրբազան Առաջնորդներուն եւ Արժ. Քհնյ. Հայրերուն եւ Առաջնորդարաններու բոլոր պատշտական մարմիններուն պատրաստ է հսկել գործադրութեան այս Կոնգրակի մէջ յիշուած եւ շեշտուած կանոնական պատուիրներուն:

Յաւուր Տօնի Սրբոյն Իսահակայ
Պարբերի Հայրապետին Մերոյ

Ի 23 Փետրուարի 1935 Տարւոյ.
Ըստ Տոմարի մերոյ ՌՅԶԵ ամի.
Թուահամար 119.
Տուեալ ի Կաթողիկոսարանի
Անթիլիաս—Լիբանան

Ա. Ղ. Օ. Ք. Ա. Ր. Ա. Ր.

(Աղբյուր) Աւետիք Բ. Տ. Ք. Ք. Ք. Ք.





106-2014

5362